ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 25/2/2

16 հոկտեմբերի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 29 անդամներ:

Բացակա էին՝ Սարիկ Մինասյանը, Լևոն Անանյանը, Հովհաննես Մանուկյանը, Կարեն Գրիգորյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

ԶԼՄ ներկայացուցիչներ, Գյումրու համայնքապետարանի ստորաբաժանումների պետեր և աշխատակիցներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վարդան Ղուկասյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Մալխասյանը

Մինչև օրակարգի հաստատմանն անդրադառնալը Գյումրի համայնքի ղեկավար Վ.Ղուկասյանն առաջարկեց օրակարգում ընդգրկել հրատապ լուծում պահանջող մեկ հարց, քանի որ Գյումրի քաղաքի Գործարանային 2/6 հասցեի հանրակացարանի շենքի վերակառուցման պատճառով անհրաժեշտ է հանրակացարանում բնակվող 9 (ինը) ընտանիքներին վարձակալական հիմունքներով ժամանակավոր տեղափոխել այլ բնակության վայր:

Քվեարկության արդյունքում ներկաների կողմից միաձայն ընդունվեց վերը նշված առաջարկությունը և հաստատման ներկայացվեց արդեն լրամշակված օրակարգը՝ 21 հարցից բաղկացած:

ԼՍԵՑԻՆ

1. ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -29 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 114-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ 2/6 ՀԱՍՑԵԻ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ 9 (ԻՆԸ) ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՅԼ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ պետական իրավունքների գրանցման վկայական՝ N 08062018-08-0004) Գյումրի քաղաքի Գործարանային 2/6 հանրակացարանի շենքի վերակառուցման պատճառով ծագած խնդրի հրատապությամբ պայմանավորված, անհրաժեշտություն է առաջացել հանրակացարանում (այսուհետ՝ Հանրակացարան) բնակվող 9 (ինը) ընտանիքներին ժամանակավոր տեղափոխել այլ բնակության վայր՝ մինչև Գործարանային 2/6 հանրակացարանի շենքի վերակառուցման աշխատանքների ավարտը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հանրակացարանում բնակվող 9 (ինը) ընտանիքներին՝ համաձայն հավելվածի, առաջարկել վարձակալական հիմունքներով տեղափոխվել Գյումրի քաղաքի վարչական տարածքում գտնվող այլ բնակարաններ՝ մինչև Հանրակացարանի վերակառուցման աշխատանքների ավարտը:
2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ կատարել սույն որոշման 1-ին կետում նշված վարձակալության վճարների հատկացումները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բյուջեից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հանրակացարանում բնակվող 9 ընտանիքներին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -29 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ

Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 115-Ա)*

Նիստը վարողն առաջարկեց **առաջնահերթ** լսել օրակարգի 19-րդ հարցը, այնուհետև անդրադառնալ մյուս օրակարգային հացերի: Առաջարկն ընդունվեց միաձայն և զեկուցման համար հրավիրվեց Հ.Վարդանյանը:

ԼՍԵՑԻՆ

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՐԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք «Սահմանադրական Դատարանի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ»,«գ» և «դ» ենթակետերը, ինչպես նաև՝ «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեյի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Դատարան ներկայացնել Դիմում՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի «Պետական բյուջեյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու պահանջով:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին սույն որոշման հետագա ընթացքը լուծելու համար հայտարարել մրցույթ՝ օրենքով սահմանված կարգով փաստաբանական ծառայություններից օգտվելու համար, հայտարարված մրցույթում առավելագույն շեմը նշել 6 000 000 (վեց միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ մինչև 2025 թվականի նոյեմբերի 01-ը ապահովել սույն որոշման կատարումը:
4. Լիազորել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Հրաչիկ Շիրակի Վարդանյանին, որ նա հանդես գա Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանում, որպես Գյումրի համայնքի ավագանու լիազորված ներկայացուցիչ, կատարի բոլոր այն գործողությունները որոնք կապված են սույն հանձնարարագրի հետ:
5.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով Սահմանադրական դատարան դիմելու, ինչպես նաև Սահմանադրական դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը վճարելու համար:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Զեկուցողի կողմից նախագիծը ներկայացնելուց հետո հարց հնչեցրեց ավագանու անդամ Ք.Հարությունյանը՝ քաղաքի զարգացման ծրագրերի վերաբերյալ: Այնուհետև ավագանու մի քանի անդամներ ելույթ ունեցան հարցի վերաբերյալ.

- Կ.Սիմոնյանը հորդորեց կողմ քվեարկել նախագծին:

- Վ.Մկրտչյանը, շեշտեց, որ կառավարությանը դատի տալու մասին նախագիծը կապ չունի իրականության հետ, թվերի միջոցով ներկայացրեց կառավարության կողմից արված ներդրումները՝ ներառյալ դոտացիաների և սուբվենվիոն ծրագրերը՝ 2018թ.-ից սկսած կազմում է 77 մլրդ դրամ: Հորդորեց աշխատել սուբվենցիոն ծրագրերի իրականացման վրա:

- Է.Բարսեղյանն իր ելույթում ներկայացրեց քաղաքի աղբավայրի պատճառով գոյացած խնդիրները, շեշտեց, որ քաղաքը թաղված է փոսերի մեջ, իսկ մենք միայն դժգոհում ենք կառավարությունից: Նշեց, որ Գյումրին վերջին տարիներին փոխվել է, ինչպես փաստում է ժողովուրդը: Անդրադարձավ նաև Կ.Սիմոնյանի ելույթին:

- Է.Բաղդասարյանն իր ելույթում ներկայացրեց Սահմանադրական դատարան դիմելու օրենսդրական կարգավորումները և շեշտեց, որ նշված հարցով Սահմանադրական դատարան դիմելու հայցը դատապարտված է բացասական եզրակացության. Միևնույն է պարտվելու ենք:

Նիստը վարողը հորդորեց մանրամասն իրավական եզրակացությունները թողնել իրավաբաններին:

- Ք.Հարությունյանն առաջին հերթի խոսեց քաղաքական խոսքի և խոսույթի բովանդակությունից: Հետո խոսեց նախագծից և փաստեց, որ տարիներ առաջ ոչ ոք չէր կարող դատի տալ կառավարությանը, սա արդեն ժողովրդավարության հաստատման

մասին է խոսում Հայաստանում: Նա ներկայացրեց ՀՀ կառավարության կողմից իրականացված աշխատանքները վերջին ամիսների ընթացքում և ասաց, որ այս դիմումով մենք միայն խոչընդոտելու ենք կառավարության ծրագրերի իրականացմանը: Անդրադարձավ նաև իրավաբանական ծառայությունների համար հատկացվող գումարի չափին:

Համայքի ղեկավարն առաջարկեց նախագիծն հաստատել մասնակի՝ վեց միլիոն դրամը հատկացնել իրավաբանական ծախսերի համար, իսկ դատարան դիմելու կետը թողնել ավագանու անդամներին առավել հանգամանորեն հարցը ներկայացնելուց հետո:

- Ռ.Մխիթարյան իր ելույթում առաջարկեց նախագծի վերաբերյալ ժողովրդի կողմից հստակ պատկերացում կազմելու համար կազմակերպել հանդիպում , հրավիրել պարոն Բագրատյանին տեսախցիկների ներքո ներկայացնենք ծրագիրը, դրա իրավական նորմերը և նախ հանդես գանք առաջարկությունով կառավարությունից գումարները հետ բերելու համագործակցության միջոցով, եթե չստացվեց համագործակցությունը, նոր դիմենք դատական ատյաններին:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:
Քվեարկության միջոցով հարցը հանվեց օրակարգից:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՐԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով, հիմք ընդունելով Գյումրիի «Կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Քրիստինե Սահակյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված զեկուցագիրը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հոկտեմբերի 03-ին, թիվ 15184-2025 թվագրմամբ), Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1. Հաստատել Կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Կազմակերպության տնօրենին՝ ողջամիտ ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարությանը առընթեր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում կատարելու խնդրանքով:
3. Հանձնարարել Կազմակերպության տնօրենին՝ Հովհաննես Հովհաննիսյանի անվան նախկին մասնաճյուղի թվով 6 աշխատողներին տեղափոխել Կազմակերպության մյուս գործող գրադարան-մասնաճյուղեր՝ ըստ աշխատողների թվաքանակի ծանրաբեռնվածության:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 116-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 23 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Զեկ. ՇՈՂԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» 515–Ն որոշման 1–ին կետով հաստատված հավելվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 11–րդ հոդվածի 3–րդ մասի, 13–րդ հոդվածի 2–րդ մասի «դ» կետով,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1–ին մասի 28–րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի

3-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թվով 23 (քսաներեք)՝ «Լապտերիկ- մսուր մանկապարտեզ», «Ծիածան-մսուր մանկապարտեզ», «Թոռնիկ Մանուշակ-մսուր մանկապարտեզ», «Ժպիտ-մսուր մանկապարտեզ», «Լուսաստղիկ-մսուր մանկապարտեզ», «Արձագանք-մսուր մանկապարտեզ», «Լիլիթ-մսուր մանկապարտեզ», «Նանուլիկ-մանկապարտեզ», «Լիանա-մսուր մանկապարտեզ», «Արևիկ-մանկապարտեզ», «Գոհար-մսուր մանկապարտեզ», «Փարոս-մսուր մանկապարտեզ», «Անի պարտեզ- մանկապարտեզ», «Կարմիր գլխարկ-մանկապարտեզ», «Հենզել և Գրետել- մսուր մանկապարտեզ», «Սուրբ Մարիամ-մսուր մանկապարտեզ», «Գյումրու մանկիկ-մսուր մանկապարտեզ», «Էյլիթիա-մսուր մանկապարտեզ», «Ձյունիկ- մսուր մանկապարտեզ», «Հուսո առագաստ- մսուր մանկապարտեզ», «Երազանք-մսուր մանկապարտեզ», «Անուլիկ-մսուր մանկապարտեզ», «Զանգակ-մսուր մանկապարտեզ» նախադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

2. Հանձնարարել սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպությունների տնօրեններին.

1) ողջամիտ ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սույն որոշման 1–ին կետով նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունները օրենքով սահմանված կարգով պետական գրանցում կատարելու խնդրանքով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ

Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 117-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 5 (ՀԻՆԳ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N-119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով և հինգ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գրություններն՝ ուղղված համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2025 հոկտեմբերի 03-ին N 15210, N 15192, N 15208, N 15193 և N 15189 թվագրություններով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ընթացիկ վերանորոգման համար շինյութերի ձեռքբերման նպատակով որպես նվիրատվություն հատկացնել 1 928 250 (մեկ միլիոն ինը հարյուր քսանութ հազար երկու հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետությանդրամ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի 8/1/1 գործառական (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգմանհոդվածից՝օրենքով սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 118-Ա)*

ԼՍԵՑԻՆ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹՎՈՎ ՄԵԿ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻՑ՝ ՀՐԱՏԱՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի աղբադաշտի հարթեցման և տոփանման աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտություն կա ձեռք բերելու թվով մեկ տրանսպորտային միջոց (բուլդոզեր):

Ելնելով վերոգրյալից և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Գյումրու կոմունալ ծառայության>> համայնքային բյուջետային հիմնարկի կարիքների համար անհետաձգելի համարվող թվով մեկ տրանսպորտային միջոցի (բուլդոզեր) ձեռքբերման անհրաժեշտությունից, ղեկավարվելով <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով, 8-րդ հոդվածով, 9-րդ հոդվածի 1-ին մասով, 12-րդ հոդվածի 1-ին և 2 –րդ մասերով, <<Գնումների մասին>> օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ղեկավարավելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի դրույթներով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Անդրանիկ Չադրյանի 2025 թվականի հոկտեմբերի 02-ի զեկուցագիրը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հատկացնել 4 500 000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, տրանսպորտային միջոցի ձեռք բերումը իրականացնելու համար:

2. Թույլատրել իրականացնել թվով մեկ տրանսպորտային միջոցի (բուլդոզերի) անհետաձգելի համարվող գնումը՝ երկրորդական շուկայից հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի միջոցով :
3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (5129) «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված տրանսպորտային միջոցի (բուլդոզերի) ձեռք բերելուց հետո այն ձևակերպել որպես համայնքային գույք:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 119-Ա)*

ԼՍԵՑԻՆ

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 283-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի3-րդկետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի դրույթներով՝Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԳյումրիհամայնքիավագանին որոշում է.
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 282-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 283-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1) որոշման2-րդ կետով հաստատված N 19 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումնուժի մեջ էմտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 120-Ա)*

ԼՍԵՑԻՆ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16–Ի N 93-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով, 34-րդ հոդվածի 1–ին 2-րդ մասերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու սեպտեմբերի 16–ի N 93-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը. 1)որոշման 2-րդ կետում «8/1/1» թվերը փոխարինել «8/2/3» թվերով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -28 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 121-Ա)*

ԼՍԵՑԻՆ

8. ԱՇԽԵՆ ԱՇՈՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Աշխեն Աշոտի Պետրոսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «ՄԵՐՍԵԴԵՍ-ԲԵՆԶ Ե 280» (MERCEDES-BENZ E 280) մակնիշի, 37 CS 574 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2022 թվականի հունվար ամսից մինչև 2025 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով: Տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է Աշխեն Աշոտի Պետրոսյանին, 2021 թվականի դեկտեմբերի 10-ին Գյումրի քաղաքի Կայարանամերձ հրապարակում վթարի է ենթարկվել, որի արդյունքում հրդեհ է բռնկվել, դիմային հատվածը և սրահը ամբողջությամբ այրվել են (հիմք՝ Հայաստանի հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ Արմեն Ափոյանի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 30-ին տրված N 1426-95/1530 տեղեկանքը, լուսանկարները դեպքի վայրից): Վթարի պատճառով տրանսպորտային միջոցը դարձել է շահագործման համար ոչ պիտանի և ենթակա է հաշվառումից հանման խոտանման պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Աշխեն Աշոտի Պետրոսյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Ղորղանյան փողոց 5-րդ նրբանցք տուն 15 հասցեում, անձնագիր՝ AP06923652, տրված՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ին, ոստիկանության 064-ի

կողմից, սոցիալական ապահովության քարտ 7505590340) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2025թվականի հոկտեմբերի 02-ին N 15104 թվագրմամբ)՝ **Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1.Սահմանել արտոնություն Աշխեն Աշոտի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2025 թվականի հոկտեմբերի 16-ի դրությամբ 2022 թվականի հունվար ամսից մինչև 2025 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 252.034 (երկու հարյուր հիսուներկու հազար երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2022 թվականի հունվար ամսից մինչև 2025 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 203.290 (երկու հարյուր երեք հազար երկու հարյուր իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 48.744 (քառասունութ հազար յոթ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշխեն Աշոտի Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 123-Ա)*

ԼՍԵՑԻՆ

9. ԹՈՄԻԿ ՀՐԱՅՐԻ ԴԱՂԲԱՇՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Թոմիկ Հրայրի Դաղբաշյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «ՎՈԼՎՈ ԻՔՍՍԻ90 2.9» (VOLVO XC90 2.9) մակնիշի, 36 TG 589 հաշվառման համարանիշով (հիմք՝ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր N PB848982) տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2020 թվականի օգոստոս ամսից մինչև 2025 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է Թոմիկ Հրայրի Դաղբաշյանին, 2020 թվականի հուլիսի 31-ին վթարի է ենթարկվել, որի արդյունքում հարուցվել է քրեական գործ և գործի շրջանակներում քննիչի որոշմամբ այն առգրավվել է և հետ է վերադարձվել 2025 թվականի հունվարի 31-ին (հիմք՝ թիվ 54158020 քրեական գործը կարճելու մասին որոշումը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Միքայել Ավետիսյանի կողմից 2025 թվասկանի հունվարի 31-ին տրված թիվ 56/56-4851 գրությունը և 2024 թվականի մարտի 18-ի տեղեկանքը, մեկ լուսանկար): Վթարի պատճառով տրանսպորտային միջոցը դարձել է շահագործման համար ոչ պիտանի և ենթակա է հաշվառումից հանման խոտանման պատճառով: 2020 թվականի մարտ ամսից մինչև 2020 թվականի հուլիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորության գումարը կազմել է ընդամենը 69.400(վաթսունինը հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որը Թոմիկ Հրայրի Դաղբաշյանը պարտավորվել է վճարել:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Թոմիկ Հրայրի Դաղբաշյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Անի թաղամաս, 11 փողոց 12 շենք բնակարան 2 հասցեում, անձնագիր՝ AL0621985, տրված՝ 2024 թվականի փետրվարի 14-ին, ոստիկանության 064-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 1303920662) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2025թվականի հոկտեմբերի 01-ին N 15008 թվագրմամբ)՝ **Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1.Սահմանել արտոնություն Թոմիկ Հրայրի Դաղբաշյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2020 թվականի հոկտեմբերի 16-ի դրությամբ 2020 թվականի օգոստոս ամսից մինչև 2025 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 848.900 (ութ հարյուր քառասունութ հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2020 թվականի օգոստոս ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը

ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 53.677 (հիսուներեք հազար վեց հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 15.674 (տասնհինգ հազար վեց հարյուր յոթանասունչորս)ՀՀ դրամ, 2021 թվականի հունվար ամսից մինչև 2025 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ մայր գումարը կազմում է 623.500 (վեց հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 156.049 (մեկ հարյուր հիսունվեց հազար քառասունինը) ՀՀ դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 677.177 (վեց հարյուր յոթանասունյոթ հազար հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ տույժը՝ 171.723 (մեկ հարյուր յոթանասունմեկ հազար յոթ հարյուր քսաներեք) Հայաստանի Հարապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Թոմիկ Հրայրի Դաղբաշյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 122-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

10. ԹՎՈՎ ՏԱՍՆՄԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով որոշման հավելվածում նշված դիմումատուների՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն թվով տասնմեկ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցների 2025 թվականի հոկտեմբերի 16-ի դրությամբ գույքահարկի տույժերի վճարումների նկատմամբ, ազատելով գույքահարկի գումարի տույժերի վճարումից՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ.Մկրտչյանի կողմից առաջարկվեց քաղաքացիներին տեղեկացնել սրա մասին, որ բոլորը հավասար պայմաններով կարողանան դիմել:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 124-Ա)*

ԼՍԵՑԻՆ

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով «Բի Էս Թի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրամադրված գույքերի շուկայական արժեքների ամփոփագիրը ՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և սահմանել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 125-Ա)*

ԼՍԵՑԻՆ

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, նկատի ունենալով, որ հավելվածում նշված հողամասերը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չեն օտարել աճուրդով, հիմք ընդունելով քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից տրված եզրակացությունները և սույն որոշման հավելվածներում նշված դիմումատուների կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ հողամասերը տվյալ հողամասերի կադաստրային արժեքով՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի պահպանման ու սպասարկման համար փաստացի զբաղեցրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին պատկանող հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարել անշարժ գույքերի սեփականատերերին՝ տվյալ հողամասերի կադաստրային արժեքով՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում NN 1, 2 հավելվածներում նշված դիմումատուներին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 126-Ա)*

ԼՍԵՑԻՆ

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՋԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՋԵԿ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ, 34-րդ, և 35-րդ կետերի պահանջները և որոշման հավելվածում նշված դիմումատուների Գյումրի համայանքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված շենք-շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նախաբանում նշված դիմումատուներին պատշաճ կերպով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 127-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում առկա են շինություններով զբաղեցված համայնքապատկան հողամասեր, որոնք նշված են կադաստրային քարտեզում, ծածկագրված են, սակայն ըստ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի տվյալների՝ նշված գույքերի սուբյեկտ հանդիսանում է քաղաքացի կամ իրավաբանական անձ: Հաշվի առնելով վերոգրյալը, նշված գույքերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականության իրավունքը գրանցելու համար ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ սահմանված կարգի 2-րդ հավելվածի 39-րդ կետի 1-ին ենթակետի՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացիների կամ իրավաբանական անձանց իրավունքների ձեռքբերման փաստաթղթերի բացակայության հիմքով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող, կադաստրային քարտեզում հաշվառված ծածկագրերով հողամասերի նկատմամբ ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականության իրավունքը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -27 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 128-Ա)*

ԼՍԵՑԻՆ

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 12-ի 1) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ սահմանելու մասին» N 82-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 6-րդ սյունակի «2 900 000» թիվը փոխարինել «21 100 000» թվով.
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի 1) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հանրային բնակելի ֆոնդի տների պահպանման ու սպասարկման համար զբաղեցված հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 179-Ա որոշման հավելվածի 1-ին կետի 5-րդ սյունակի «72062» թիվը փոխարինել «395852» թվով և 6-րդ սյունակի «(հին)» բառը փոխարինել «(նոր)» բառով:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 10-ի 1) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին պատկանող հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 102-Ա որոշման 2-րդ հավելվածի 5-րդ կետի 8-րդ սյունակի «95834» թիվը փոխարինել «49354» թվով:
4. Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -27 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 129-Ա)*

ԼՍԵՑԻՆ

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 138-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 7-րդ փողոց N 11/1 հասցեի անշարժ գույքն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գին սահմանելու մասին» N 138-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ 1) որոշման 2-րդ կետի «200 000 000 (երկու հարյուր միլիոն)» թիվը և բառերը փոխարինել «160 000 000 (մեկ հարյուր վաթսուն միլիոն)» թվով և բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 130-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 139-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շրակի մարզի Գյումրի

համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 5-րդ փողոց N 7/1 հասցեի անշարժ գույքն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գին սահմանելու մասին» N 139-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ 1) որոշման 2-րդ կետի «100 000 000 (մեկ հարյուր միլիոն)» թիվը և բառերը փոխարինել «80 000 000 (ութսուն միլիոն)» թվով և բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 131-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

18. ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ ՄԱՐՏՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով ազատամարտիկ Մարտուն Պետրոսյանի մատուցած ծառայությունը Արցախի ազատագրման գործում և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Հավերժ Հիշատակ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Պետրոսյանի 2025 թվականի հոկտեմբերի 08-ի զեկուցագիրը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. 1992-1994 թվականների առաջին արցախյան պատերազմի մասնակից, ազատամարտիկ Մարտուն Պետրոսյանի գերեզմանի կառուցման համար համայնքի բյուջեից հատկացնել 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի գործառական (8/2/7) «Շենքերի և շինությունների շինարարություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -27 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ

Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 132-Ա)*

ԼՍԵՑԻՆ

20" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 96-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական երրորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի նոյեմբերի 11-ը՝ ժամը՝ 12:00:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -28 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 133-Ա)*

Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ

Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ

Վ. ԴԱՎԹՅԱՆ

Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Ս. ԱԴԱՄՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ

Ն. ՄԻՐԶՈՅԱՆ

Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ս. ՄՈՍՈՅԱՆ

Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ք. Գյումրի
2025թ. հոկտեմբերի 16